ՀԵՂԻՆԷ

ՎԷՊ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն [1])

V

Երեք կրակոտ ձիեր սլացնում էին Սահառունու կառքը Ե-ից դէպի Թ-ս տանող խճուղիով, հեռացնելով նորան իւր ծննդավայրից։

Սահառունին քաղցր ցնորքների մէջ էր ընկել։ «Վերջապէս նորից կը տեսնեմ նորան... Ես փախայ նորանից, կարծելով որ, եթէ նորանից հեռու լինեմ, զգացմունքներս կը լուեն, կը հպատակուեն խելքիս. որքա՛ն միամիտ էի ես, որքա՛ն սխալ էր իմ ենթադրութիւնս... Քանի ես նորանից չէի հեռացել ու ամեն օր տեսնում էի նորան, ես չէի իմանում թէ ինչ երջանկութիւն է ինձ համար նորա մօտ լինելն ու նորա երեսը տեսնելը. բայց, հէնց որ բաժանուեցինք միմեանցից, ես հասկացայ՝ որ այդ ինձ համար նոյնպիսի անհրաժեշտ պահանջ է, ինչպէս շնչելը...

---

[1] Տե՛ս «Մուրճ»- 1891 № 1։

Անցնում անկայտանում էին վերատեր վերստերի յետևից, փոխ-ուում էին կայարանները, մեր ճանապարհորդը ոչինչ չէր նկատում. նա վերացել էր մտքով, նա երջանիկ էր...

Գայծառ օր էր, երբ որ Սահառունին մտաւ Թ-ս. ճանապարհին պատահող ծանօթներին նա ուրախ-ուրախ ու քաղցրութեամբ բարևում էր և նորան թուում էր թէ ծանօթներն էլ նոյն սրտով են պատասխանում իւր բարևին։

—Այդպէս է միշտ, սիրահարուած մարդը ամենքին քաղցր սրտով ու բարի հոգով է վերաբերում։

Այդ մտածելու րոպէին յանկարծ նորա աչքովն ընկան Հեղինէն թևանցուկ արած Ասունու հետ։ Նրանք ուրախ-ուրախ բարևեցին նորան թաշկինակները թափ տալով։ Սահառունին ուրախութիւնից քիչ էր մնում դուրս թռչէր կառքից, բայց իրան զսպեց։ Նրանք անցան ու անյայտացան։

—Ինչ է պատահել, այդ ո՞ւր էք այդպէս շտապում, միաձայն հարցրեցին Եփեմիան ու Ելիզաւետա Բոգդանովնան, որոնք գալիս էին հակառակ կողմից ու պատահեցին Հեղինէին ու Ասունուն։

—Գէօրգի Ալեքսանդրովիչն եկաւ. տիկին Հեղինէին տանում եմ տուն հասցնեմ ու վազ տամ նորան հիւրանոցից տանեմ իմ տունը, շտապով պատասխանեց Ասունին։

—Ինչ անսիրտ մարդ է. կինը մեռաւ թէ չէ՝ ամեն բան ծախեց։

—Մենակ, այն էլ ոչ հարուստ մարդուն ինչի՞ պէտքն են, Ելիզաւետա Բոգդանովնա, այն բոլոր բաները, որ անհրաժեշտ են ընտանիքի համար, սառնասրտութեամբ պատասխանեց Հեղինէն։

—Դուք հօ ամեն րոպէ պատրաստ էք նորան պաշտպանելու համար, նկատեց այրին հեգնօրէն ծիծաղելով։

—Չի լինի, երբէք կին որ իրար պատահեցին, պէտք է լեզուակռիւ բարձրացնեն. քանի շուտ փախչենք մեղքից այնքան լաւ է, տիկին Հեղինէ, ծիծաղելով արտասանեց Ասունին ցտեսութիւն ասելով տիկիններին։

—Դէ լաւ, գնացէք. գործից յետ չեմ գցի, քաղցրութեամբ ասաց Միհրանովնան։

—Ինչ թարառուկ բան են գտել, գլխապատառ վազ են տալիս դիմաւորելու համար, յետևներիցը փնփնթացրեց Եփեմիան։

—Միթէ՞ այդպիսի մի չնչին մարդ կարող է գրաւել Ելենա Պաւլոմնայի սիրտը, ատատանայաբար հարցրեց Միհրանովան։ Նկատեցի՞ք, նա քիչ էր մնում առանց մեզ բարևելու անցնէր։

—Նորա ինչ միտքը կը գանք մենք, երբ որ ուշ ու միտքը ուրիշի հետ է։

Ելիզաւետա Բոգդանոմնային էլ հէնց այդ էր պէտք. օրերով հաց ու ջուր չը տայիք, նոր լուրեր ու ասէկոսէներ հաղորդէիք. մանաւանդ որ Հեղինէին չէր սիրում և շատ ուրախ կը լինէր եթէ նորան բամբասելու համար նիւթ ունենար։

—Խեղճ Միխայիլ Պետրովիչ, նորա պէս մարդը շատ աւելի լաւ կին պէտք է ունենար։

—Ես էլ այդ եմ միշտ ասում. խեղճ եղբայրս որ բաղդ ունենար՝ գորան չէր պատահի, հոգոց քաշելով ասաց Եփեմիան։ Որ իմանաք թէ ոնց է քրքրում, սկի ասում է թէ ես ու Թամարն էլ Աստծու ստեղծած ենք։

—Մի՞թէ, ինչ էք ասում. ում մտքովը անց կը կենար այդպիսի բան։

—Մինչև այժմ լռում էի, բայց էլ չեմ կարողանում համբերել։ Ասենք այժմ էլ, թող լեղուս չորանայ, թէ մէկն ու մէկի մասն խօսք բաց անեմ դրա մասին. բայց ձեզնից, մեր ընտանիքի բարերարից, այդ ընտանեկան ցաւալի գաղտնիքը ծածկել չեմ կարող։

Ապահով եղէք, Եփեմիա Պետրոմնա, գաղտնիքը էլի գաղտնիք կը մնայ։ Ես միշտ սիրել ու յարգել եմ ձեր ընտանիքը։ Դուք այն ասէք ինձ, ձերոնք մտի՞կ են այն օրիորդի հետ, հետաքրքրութեամբ հարցրեց Միհրանովան, նայելով Աննա Գուրգէնեանին։

—Ա՞յն որ Թոմաեւի հետ գալիս է։

—Հա, նա։

—Ինչպէս չէ, մտիկ ենք, նա մեզ աղգական է գալիս։ Ափսոս, լաւ աղջիկ էր քանի որ մայրը չէր մեռել, իսկ այժմ որ ընկել է այդ անգործի հետ՝ շատ է փոխուել. վերջը կարող է շատ վատ լինել. բայց գիտէ՞ք՝ Ուբարովը շուտ շուտ հարց ու փորձ է անում դորա մասին։

Միհրանովան ձևացրեց թէ զարմացաւ։

—Գիտեմ, գիտեմ, մոռացել նա, ինձ էլ է թուում որ այդտեղ

մի բան պէտք է լինի. ես վաղուց եմ մի բան լսել, այժմ՝ ինչպէս երևում է՝ լսածս ճիշտ է դուրս գալիս։

Այդ մտածելիս՝ Միհրանովայի դէմքը փոխէ փոխ մէկ մտահոգ արտայայտութիւն էր ստանում, մէկ խորհրդաւոր կերպարանք։

—Դուք էլ առաջուան նման շուտ-շուտ չէք շնորհ բերում Ուբարովի տունը, կմկմալով սկսեց Եփեմիան։

—Որովհետև համոզուեցի, որ անօգուտ է իմ աշխատելս. ձեր քեռին շատ յամառ մարդ է, անկարելի է որ հաշտուի Միխայիլ Պետրովիչի հետ։

Եթէ Եփեմիան այդ րոպէին նայէր Միհրանովայի երեսին, կը տեսնէր նորա դէմքի ուրախ արտայայտութիւնը և կը հասկանար որ նա դորա համար ոչ միայն դարդ չէր անում, այլ ընդհակառակը ուրախ էր որ Ուբարովը չի հաշտուում։ Երևում էր որ նորա գլխում մի նոր միտք էր ծագել։

Այդ ժամանակ Թոմաեան ու Գուրգէնեանը հասան նրանց մօտ, և՝ սառը գլուխ տալով՝ շարունակեցին իրանց ճանապարհը։

Մի քսան քայլ անցնելուց յետոյ օրիորդը կանգ առաւ մի խանութի առաջ։

—Այդ ինչի վերայ էք այդքան նայում։

—Տեսէք ինչ սիրուն բան է։

Դուք, օրիորդ, ինչպէս երևում է՝ սիրում էք շքեղ ու շռայլ բաներ։

—Ինձ դուր է գալիս ամեն գեղեցիկ բան։

—Ուրեմն դուք ուրախութեամբ կը պահէք այն մարդու հետ, որ ընտրել են ձեզ համար ձեր մօրաքոյրերը, սակայն Թոմաեանը քննական հայեացք գցելով նորա վերայ։ Նա ինքը գեղեցիկ է և, բացի դրանից, կը շրջապատի ձեզ այնպիսի բաներով, որ ձեզ դուր են գալիս։

—Ա՛յ բան։ Ուրեմն ձեր կարծիքով բաւական է տղամարդը գեղեցիկ լինի, որ աղջիկը համաձայնի իւր կեանքը կապել նորա կեանքի հետ։ Չէ, սխալ էք. տղամարդը որ գեղեցիկ եղաւ և ուրիշ արժանաւորութիւններ չունեցաւ, դէն գցելու բան է։

Գուրգէնեանը մտերմաբար նայեց Թոմաեանին։ Նրանք արդէն հասել էին տուն. օրիորդը զանգը խփեց ու հարցրեց.

—Չէ՞ք մտնի մեզ մօտ, ձեր սիրած եղանակները կ՚ածեմ։

Թոմաեւը ժպտաց ի նշան համաձայնութեան և ներս մտաւ։

—Ուրեմն դուք հաստատ վճռել էք որ չէք պակուի այն մարդու հետ, դիմեց նա Աննային երբ որ մտան տուն։

—Ի՞նչ թերահաւատն էք, բացականչեց օրիորդը ձեռները իրար խփելով. Թոմմաս առաքեալիցն էլ անցաք. հօ գիտէք թէ ինչքան անբաւականութիւններ եմ ունեցել այդ պատճառով մօրաքոյրերիս հետ. բայց չէ, էլի կասկածում էք, գիտէ՞ք, բարկացած աւելցրեց նա, որ վարժուհի դառնալուս գլխաւոր պատճառներից մէկը հէնց այն էր, որ ազատուեմ մօրաքոյրերիս լեզուից։

—Կը նշանակի վարժուհութիւնը ձեզ դուր չի գալիս։

—Ճիշտն ասած, քանի վարժուհի չէի եղել, վարժուհութիւնը ինձ աւելի հրապուրիչ էր թուում քան է իսկապէս։ Ես չէի իմանում որ այդքան դժուարութիւնների կը հանդիպեմ։

—Մի քիչ էլ համբերէք, ամեն բան կ'հեշտանայ։

Այդ ասելիս Թոմաեւը այնպիսի դորովանքով նայեց օրիորդին, որ երկուսի սիրտն էլ սփոփուեց։

—Հը, Դաւիթ Աբրամիչ, հանդստացա՞ք, թէ կասկածներդ դեռ էլի չեն փարատուել։

—Զէ, չէ, բոլորովին փարատուեցին, անսովոր աշխոյժով արտասանեց Թոմաեւը և անդիտակցաբար բռնեց օրիորդի ձեռքը։ Մի հարց էլ, Աննա Արտեմիևնա, հօ՞ չէք բարկանալ։

—Զէ. ես ձեզ ամեն բան թոյլ եմ տալիս։

—Ուրեմն պատասխանեցէք ինձ, ինչպէ՞ս կը վերաբերուէիք դուք եթէ ձեր ձեռքը խնդրէր մի աղքատ, աննշան մարդ, բայց այնպիսի մարդ, որ... Թոմաեւը կանգ առաւ, էլ չը կարողացաւ շարունակել։

Այդ առաջին անգամն էր, որ նա յայտնում էր իւր սէրը։

Օրիորդը կարմրեց և շփոթութիւնից, չիմանալով ինչ անի, մոտեցաւ դաշնամուրին ու մեքենայաբար սկսեց թերթել նոտաները։

Այդ բոլէին մտան սենեակը մօրաքոյրն ու. երեխաները։ Թոմաեւը շփոթուեց, Աննայի վրայ աղերսող հայեացք գցեց, գլխարկը վերցրեց ու շտապելով դուրս եկաւ փողոցը։ Նա այնքան տարուած էր իւր մտածմունքներով, որ հազիւ նկատեց Սահաւունուն ու Ասունուն, որոնք կառքը նստած սլացան նորա կողքով դէպի Ամիրանովների բնակարանը։

Իսկ Հեղինէն պատուհանի առաջ կանգնած ականջը սրած լսում էր կառքերի դղրդոցը։

—Վերջապէ՛ս, ուրախ-ուրախ բացականչեց նա և գնաց բնակարանի դուռը բանալու։

—Չեմ կարող ասել որքան ուրախ եմ որ ձեզ տեսնում եմ, ուրախութիւնից պայծառացած երեսով դիմաւորեց նա Սահառունուն, պինդ սեղմելով նորան իւր ձեռքով, որ նա համբուրեց։

Ալեքսանդր Վասիլիչ, նեղութիւն կրէք զանգը խփել, պէտք է ասել որ ձեռաց սամովարը ղնեն, բայց կարելի է դուք, Գէորգի Ալեքսանդրովիչ, ուզէք մի բան ուտել թէյից առաջ։

—Պաա շնորհակալ եմ, տիկին Հեղինէ, ես արդէն ճաշել եմ, իսկ թէյ որ տաք, չէ չեմ ասի։

—Այս րոպէին ամեն բան պատրաստ կը լինի, ասաց Ասունին, վերադառնալով սեղանատնից և, ընկերաբար խփելով Սահառունու ուսին՝ աւելցրեց. հազիւ հազ վերադարձար, շատ էինք կարօտել քեզ։

—Սկի մտքովս էլ չէր անցնում, որ կարօտ կը լինէիք ինձ, թէ չէ վաղուց վերդարձած կը լինէի, ծիծաղեց Սահառունին։

—Օ՛յ, շատ խորամանկն էք, Գէորգի Ալեքսանդրովիչ, դուք այդ մեզնից էլ լաւ կիմանայիք, ասաց՝ Հեղինէն մատը թափ տալով Սահառունու վրայ։ Չէ՞, Ալեքսանդր Վասիլիչ, ճիշտ չե՞մ ասում, օր չէր լինի որ չը մտաբերէինք Գէորգի Ալեքսանդրովիչին։

—Որ այդպէս է, կը նշանակի ես իմ կարծածիցը աւելի բախտաւոր եմ եղել, ասաց Սահառունին երջանկութեան ժպիտն երեսին և նորա՝ երախտագիտութեամբ լի՝ հայեացքը հանդիպեց Հեղինէի հայեացքին։

Այդ բարեկամական և ուրախ ողջոյնների ու հարց ու փորձի ժամանակ ներս մտաւ Ամիրանովը։

—Օհո՛, գալուստդ բարի, Գէորգ, ինչ շատ ուշացար, բարեկամ, ասաց նա գրկելով Սահառունուն և սկզբում մի քիչ շփոթուեց, կարծես իրան անհամապատասխան մարդկանց շրջան ընկնելով. բայց իբրև փորձուած մարդ՝ երկար չը մնաց շփթուած, շփոթութիւնը շուտով անցաւ։

Նորա գալուց յետոյ Հեղինէի տրամադրութիւնը վատացաւ։ Թէյից յետոյ բոլորն էլ սըսկեցին։

—Այս ինչ կը նշանակի, պարոններ, բոլորդ էլ իրար երեսի էք մտիկ անում, կարծես ինչ-որ գաղտնիք կայ ձեր մէջ որ ինձ չէք ուզում յայտնել, լռութիւնը ընդհատեց Սահառունին։

Տեսնելով որ էլի ոչինչ չեն ասում, լսում են կամ թէ խօսում են, բայց էլի հարցին չեն պատասխանում, Սահառունին դիմեց տանտիկնոջը.

—Էլի ձեզ վրայ է յոյսս, տիկին Հեղինէ, դուք ինձնից ոչինչ չէք ծածկի. դուք գիտէք որ ես աւելի լաւ եմ համարում իմանալ թէ ինչ է լինելու, թէկուզ այդ շատ ցաւալի բան լինի, քան թէ ոչինչ չ'իմանամ ու տանջւեմ հաղար ու մէկ կասկածներով։

Հեղինէն տեսաւ, որ չի կարելի էլ ծածկել, և ասաց։

—Հէնց ա՞յդ, էլ ուրիշ ոչի՞նչ, հարցրեց Սահառունին բոլորովին սառնասրտութեամբ։ Ես հէնց ինքս ինչքան ժամանակ է ուզում էի դուրս գամ ծառայութիւնից, բայց այսօր-վաղն էի գցում, և այժմ համարեա ուրախ եմ որ հանգամանքները իրանց-իրանց այդ հարցը միանգամից, թէև մի քիչ խիստ կերպով, վճռեցին ու ինձ ազատեցին ու ինձ ազատեցին տատանմունքներից։

Աւունին շատ էր աշխատում խօսակցութիւնը մտերմական դարձնել, բայց չէր յաջողում։ Առանց այդ էլ նա անհամբերութիւնից չէր կարողանում այդ օրը մի տեղ երկար նստել, ուզում էր շուտով տանել Սահառունուն ընկերների մօտ, որոնց արդէն հաղորդել էր որ նա եկել է, բայց որ խօսակցութիւնն էլ սառն էր անցնում, այդ աւելի սաստկացրեց նորա անհամբերութիւնը. նորան սաստիկ ձանձրալի էր թւում այդ օրը Ամիրանովենց տանը և նա չը թողեց որ Սահառունին երկար նստի. տարաւ նորան Թոմաևի տունը, ուր պէտք է հաւաքւէին նոցա բոլոր ընկերները Սահառունուն տեսնելու համար։

Աւելորդ է ասել, որ բոլորին էլ մեծ ուրախութիւն պատճառեց Գէորգի վերադարձը։ Նա ընկերների վրայ մեծ բարոյական ազդեցութիւն ունէր։ Բոլորի համար մի տեսակ պահանջ էր դարձել յայտնել իրանց արտի գաղտնիքները, իրանց տանջող կասկածները Սահառունուն, սպասելով նորանից խելացի վճիռ կամ հոգեկան մխիթարութիւն։ Հասկանալի է թէ որքան զգալի պէտք է լինէր ընկերների համար նորա բացակայութիւնը։ Բարեկամական գրկախառնութիւնից, հաս-

բոյրներից ու կարճ հարց ու փորձից յետոյ, նրանք սկսեցին խօսել զանազան հասարակական հարցերի մասին, ինչպէս միշտ՝ տաք-տաք յարձակւում, պաշտպանում էին, վիճում էին ու համաձայնում։

Երբ որ բոլորը ցրւեցին և միայն Սահառունին, Թոմա ևը, Աստնին ու Պետրոսեանցը մնացին, Սահառունին մտերմաբար հարցրեց նրանց.

—Դէ, հիմա ասէք տեսնենք, ինչպէս են ձեր մասնաւոր գործերը։

—Ոչինչ, կանք էլի՛, անհոգ կերպով ժպտալով ասաց Թոմաևն ու, սիգարը կպցնելով, փառաւորապէս մեկնւեց բազմոցի վրայ։

—Այնպէս ես ասում, որ Գէորգը՝ ով գիտի՝ կարծի, թէ եթէ ոչ մինիստր՝ գոնէ մինիստրի օգնական են նշանակել քեզ, նկատեց Աստնին։ Լսիր, Գէորգ, տես ինչ հրաշքներ են պատահել քո բացակայութեան ժամանակ։

—Ինչ ու մի՛չ գիտեմ. ինձ գրել էիք, որ Տիգրանը շատ տատանւելուց յետոյ վերջապէս ինչ որ կապալ է վերցրել։

—Էհ, ինչ արած, շատ նեղն էի ընկել, աղքատութիւնը մարդու շատ բան անել կը տայ, դառն ժպիտով ասաց Պետրոսեանցը։

—Իսկ իմ մեծապատւութիւնը, պատիւ ունիմ քեզ զեկուցանելու, Գէորգ, մնաց անգործ։

—Ինչպէս թէ անգործ, Դաւիթ, կատա՞կ ես անում։

—Դժբախտաբար ոչ, պատասխանեց Թոմաևը փոքր ինչ յուզւելով։ Իմ կառավարած գործարանը այրւեց։

Այդ լուրը շատ վշտացրեց Սահառունուն։

Սկսեցին խելք խելքի տալ, թէ ինչ պարապմունք կարելի է գտնել Թոմասի համար, բայց ոչինչ եզրակացութեան չեկան։

—Էհ, բան չը կայ, պարոններ, ես էլի կսկսեմ մասնաւոր դասերով պարապել, թէև սկի սիրտ չունիմ տնից տուն քաշ գալու, իսկ յետոյ երևի մի պարապմունք կը գտնեմ, վճիռը տւեց Թոմաևը մնաս բարև անելու ժամանակ։

Երբ որ նա մենակ մնաց իւր համարում, սաստիկ մտահոգութեան մէջ ընկաւ։ Նա այնպիսի մարդկանցից էր, որոնք շատ քչերին են յայտնում իրանց գաղտնիքները և առհասարակ չեն սիրում շատ խօսել իրանց գործերի մասին։ Այժմ մենակ որ մնաց, բոլորովին անձնատուր եղաւ իւր զգացմունքներին։ Ճիշտ է, առաջ էլ

Թոմաեւը գոհ չէր իւր դրութիւնից, բայց նա երբէք չէր օրօրում իրան փայլուն յոյսերով, այլ համբերութեամբ և հանգիստ սրտով սպասում էր որ դրութիւնը լաւանայ և շատ քիչ էր մտածում իւր կարիերի մասին։ Բայց վերջին մի քանի ամիսը փոփոխութիւն էր նկատւում Թոմաեւի մէջ. նա սաստիկ աշխատում էր ձեռք գցել մի գործարանի կառավարչի պաշտօնը. կարծես մի անսովոր բան նորան եռանդ էր ներշնչում. աշխատանքը դուր չ՚անցաւ, բախտը ժպտաց նորան, բայց երեք ամիս չանցած, նորա յոյսերը օդը ցնդեցին։ Պաշտօնից զրկւելը ինքն ըստ ինքեան Թոմաեւին շատ վշտացնել չէր կարող, բայց ցաւը նորանումն էր, որ պաշտօնը կապ ունէր նորա սրտի ամենաջերմ փափագի հետ։ Զրկւելով ապրուստի միջոցներից, նա զրկւում էր Աննա Գուրգէնեանին իւր կինը անուանելու հնարաւորութիւնից, իսկ այդ մեծ ցաւ էր պատճառում նորա սրտին։

—Ինձ համար ոչինչ, ես կը սպասէի, բայց նա...

—Աննան ամեն կողմից հիանալի աղջիկ է, բայց դեռ չահել է և չափազանց բարի ու զիջող. վախենում եմ յանկարծ մի ուրիշով գրաւի և այն ժամանակ ով գիտի ինչ ուղղութիւն կը ստանան նորա մտքերն ու հակումները, մտածում էր Թոմաեւը։ Ափսոս, հազար ափսոս, որ դեռ բնաւորութիւնը չի կազմակերպւել։ Այդպէս է լինում միշտ՝ ով որ մանկութիւնից խելացի և անյողդողդ դեկավար չի ունեցել, շատ շուտ է ընկնում ուրիշի ազդեցութեան տակ։

Միտս է, թէ որքան ժամանակ նա պատկառանքով էր վերաբերւում Մարիա Միհրանովային, որից բարեբախտաբար մի բանում է միայն օրինակ վերցրել—սէր դէպի ուսումը։ Միհրանովայից յետոյ Կատեա Սահակունին իւր ազդեցութեան տակ գցեց Աննային. գրքերն ու երաժշտութիւնը քիչ քիչ մոռացութեան տրւեցին. այժմ՝ ինչպէս երևում է՝ տիկին Հեղինէի ազդեցութեան տակն է ընկել։ Յետոյ ով գիտի ինչ կարող է պատահել։ Մի բան միայն կարելի է հաստատ ասել, որ բնատուր բոլոր յատկութիւնները լաւ են և արատ ասած բանը նորան մինչև այժմ չի դիպել և չի էլ դիպչիլ։

Վերջապէս այս էլ պէտք է իմանալ, արդեօք նա ինձ այնքան սիրում է, որ համաձայնի կինս դառնալ։ Ինչ թւում է, որ նա դէպի ինձ լոկ բարեկամական սէր է զգում։ Զէ, աւելի լաւ է սպասեմ, եթէ առաջարկեմ ու մերժի՝ դարդիցս գլուխս կը կորցնեմ։

Այսպէս երկար ժամանակ մոռտանջում էր Թոմաեանը մինչև որ վերջապէս քունը փակեց նորա աչքերը։

VI

Միւս առաւօտ, դեռ Թոմաեանը տեղիցը չէր վեր կացել, Պետրոսեանցը թխթխկացրեց նորա համարի դուռը։ Խօսք ընկաւ Աննա Գուրգէնեանի մասին։

—Լսի, բարեկամ, քաղաքում շատ անախորժ լուրեր են տարածուել քո ու Աննայի մէջ եղած մօտ յարաբերութիւնների մասին. գու պէտք է վերջ տաս այդ ասէկոսէներին։

Թոմաեանը մի քիչ կարմրեց, ուզում էր պատասխանել, բայց Պետրոսեանցը չը թողեց որ խօսի։

—Եթէ նա քիչ դուր է գալիս, ինչու չես պատկուում, մանաւանդ որ նա էլ՝ ինչպէս երևում է՝ ուրախութեամբ կը համաձայնի։

—Ինձնով որ լինի, ես հէնց այս րոպէին կերթամ ու առաջարկութիւն կոնեմ. բայց ինքդ դատիր, Տիգրան, կարող եմ միթէ այդ անել, խորհուրդ կը տա՞ս։

Պետրոսեանցը սաստիկ մտահոգութեան մէջ ընկաւ։

—Ուրեմն փողի պակասութիւնն է արգելքը, յանկարծ բացականչեց նա մատը բարձրացնելով վերև։ Էհ, դատարկ բան է... եթէ դու չունիս, նա կունենայ։ Առ այժմ մի հարցրու, յետոյ կիմանաս թէ որտեղից ունի։

—Ես ոչինչ չեմ հարցնի. բայց ինձ համար անտանելի կը լինի կնոջս փողով ապրել։ Դու լաւ գիտես, Տիգրան, ես այն իդէալիստներիցը չեմ, որոնք դիտմամբ աղքատ նշանած են փնտրում. ընդհակառակը լաւ աղջկայ վրայ որ բաժինք էլ լինի՝ աւելի լաւ, բայց... չէ որ մարդն էլ մի բան պէտք է ունենայ... կինը հօ չը պէտք է մարդուն պահի... Այ, սպասիր...

Պետրոսեանցի խիտ յօնքերը կիտուեցին։

—Որ այդպէս է, յարաբերութիւններդ բոլորովին կտրի Գուրգէնեանի հետ, թէ չէ նորա անունը կը կոտրի։ Մէկ մտածիր, թէ երբ աղջկայ անունն էլ որ արատաւորուեց, խեղճին էլ ինչ կը մնայ, բարկացած աւելցրեց նա։

—Ի՞նչ, ի՞նչ... Ով կը համարձակի ասել թէ նա անարատ չէ, տաքացաւ Թոմաևը և նորա սովորական հանգիստ դէմքի վրայ երևաց զայրոյթի արտայայտութիւն։

—Ի հարկէ ոչ ես և ոչ քո ուրիշ ընկերները...

—Ես ամենքին կ'ապացուցանեմ, որ մեր յարաբերութիւնները ամենամաքուր և...

—Սո՛ւս, սո՛ւս... այնպէս ես խօսում, կարծես թունդ եւրոպացի լինես ու մեր կողմերը այս քանի օրս եկած լինես։ Մի մոռանալ, եղբայր, որ մենք Ասիայումն ենք, Թ-սումն ենք, ուր մի քանի տարի առաջ աղջիկներին իրաւունք չէին տալիս մինչև անգամ խօսել տղամարդու հետ։ Դէ, այժմ մնաս բարով, Դաւիթ, խորհուրդ եմ տալիս քեզ լաւ մտածել այդ հարցի մասին։

—Կաց, ո՞ւր ես շտապում։

—Աւանց այն էլ ուշացել եմ, պէտք է երթամ Ուբարովի մօտ, ուղարկել էր ինձ կանչելու։

—Միթէ ճիշտ է Տիգրանի ասածը, միթէ իմ պատճառով խեղճ աղջիկը բամբասանքի առարկայ է դարձել։ Չէ, ես այդ տանել չեմ կարող, մտածում էր Թոմաևը սաստիկ յուզած և այդպիսի մտատանջութեան մէջ մնաց տանը մինչև երեկոյ։

—Ահա իմ վճիռը. ես այժմ կերթամ Նուխի ծնողներիս մօտ. այնտեղ գուցէ գործ գտնեմ. աշունքը կը վերադառնամ և այն ժամանակ յուսով եմ... Նա իմն կը լինի...

Այդ մտածմունքի մէջ Թոմաևը վեր կացաւ տեղից, դուրս եկաւ տանից ու գնաց Գուրգէնեանի մօտ իւր մտադրութիւնը նորան յայտնելու։ Նա երեխաների հետ նստած թէյ էր խմում երբ որ ներս մտաւ Թոմաևը։ Խեղճ աղջկայ վրայ շատ ծանր տպաւորութիւն թողեց Թոմաևի յայտնած լուրը. երեխաների թոթովանքն ու զուրգուրանքն էլ այս անգամ չը կարողացան փարատել Աննայի վիշտը։ Թոմաևը լուռ նստած հիանում էր նայելով թէ որքան համբերութեամբ ու քնքշութեամբ է վարւում Աննան փոքրիկ եղբայրների ու քոյրերի հետ։

Օրիորդը երեխաներին տարաւ, համբուրեց, բարի գիշեր ասաց, քուն դրեց ու վերադարձաւ Թոմաևի մօտ։

Կարող եմ յուսալ, օրիորդ, որ դուք ինձ չէք մոռանալ, հարցրեց Թոմաևը մնաս բարև անելիս։

—Ի հարկէ, ի հարկէ, վճռական կերպով պատասխանեց Գուրգէնեանը ղղացուած սեղմելով Նորա ձեռքը։

Երկուսն էլ տխուր էին։

Իսկ Պետրոսեանցը Թոմաևի մօտից գնաց Ուբարովի տունը։

—Մօտեցէք ինձ, մօտ եկէք, Տիգրան Աւետիչ, խորհրդաւոր ձայնով մօտ կանչեց հիւանդը։ Լաւ կը լինէր որ մեզ մենակ թողնէին։

Եփեմիան, Թամարն ու կիսակոյր պառաւը տեղներից վեր կացան ու դուրս գնացին։

—Դուք մի օր մի խօսք թուցրեցիք իմ աղջկայ մասին, սկսեց Ուբարովը դժուարութեամբ շունչ քաշելով։ Մինչև այժմ սկի միտքս չէր գալիս նա, սկի հոգս չէի տանում թէ կենդանի է նա թէ մեռած. ամեն մարդ իրաւունք ունի ինձ մեղադրելու, ասելու որ ես քարասիրտ, անհոգի մարդ եմ. բայց այժմ չեմ իմանում ինչ է պատահել, ինչ է պատահել ինձ, մի անդիմադրելի ոյժ կարծես ինձ ձգում քաշում է դէպի այդ երեխան։ Ինձ ամեն րոպէ թւում է, թէ երկնքից մի ձայն ինձնից հաշիւ է պահանջում իմ անառակութեան մէջ անցրած երիտասարդութեանս համար։ Աղճի խայթոցները ամեն րոպէ աւելի ու աւելի սաստիկ են տանջում ինձ։ Դուք մօտ ծանօթ էիք այն թշուառ կնոջ հետ. ասէք խնդրեմ ինչ եղաւ աղջիկը Նորա մեռնելուց յետոյ, աղաչելով արտասանեց Ուբարովը և Նորա մռայլ դէմքը մեղմ արտայայտութիւն ստացաւ։

Պետրոսեանցը շփոթուած նայում էր հիւանդի վրայ, որ՝ ջղաձգաբար բռնելով Նորա ձեռքը՝ հազիւ լսելի ձայնով հարցրեց.

—Մի ժամանակ լսեցի որ երեխային իւր մօտ էր վերցրել հանգուցեալի բարեկամուհի Գուրգէնեանը, բայց այն ժամանակ ուշադրութիւն չը դարձրեցի այդ բանի վրայ, ասէք խնդրեմ՝ ճիշտ է այդ։

Պետրոսեանցը կարեկցաբար նայելով հիւանդի վշտատանջ երեսին, գլխով դրական նշան արեց և, կռանալով Նորա անկողնի վրայ, շշնջաց.

—Հանդստացէք, ի սէր Աստուծոյ. Գուրգէնեանները որդեգրեցին ձեր աղջկանը և հօր ու մօրից աւելի շատ էին սիրում ու գգւում Նորան։

Աստուած լուսաւորի նրանց հոգին, արտասանեց Ուբարովը զգացուած սրտով։ Տիգրան Աւետիչ, կատարեցէք իմ խնդիրքը, բերէք ինձ մօտ իմ աղջկան, թող մի նայեմ նորա վրայ ու յետոյ յաւիտեանս փակեմ աչքերս. ես գիտեմ՝ էլ շատ չեմ ապրելու։

—Հանգուցեալը ինձ ու իւր բարեկամուհուն խնդրեց, որ աղջկան չը յայտնենք իւր ծագման գաղտնիքը։ Վախենում եմ չը կարողանաք ձեզ զսպել ու բացուէք նորա մօտ, անհանգստութեամբ պատասխանեց Պետրոսեանցը։ Խեղճը առանց այն էլ շատ դարդ է տեսել, չարժի նոր վէրքեր էլ աւելցնել խոցոտուած սրտին։

—Չէ, չէ, ապահով կացէք, նա ոչինչ չի իմանայ. ես այդ գաղտնիքը ինձ հետ գերեզման կը տանեմ։

Այդ բոպէին դուռը կամաց ճռռաց։

—Ո՞վ է։

—Միքայէլը, իմանալով որ դուք թոյլ էք տուել, եկել է ձեզ տեսնելու, անվճռական ձայնով ասաց Թամարը։

—Չի ուզի, յետոյ զղջացի որ թոյլ տուեցի, թող կորչի, զզուանքով փնփնթաց հիւանդը։

Ախ, ստոր արարած, որ թոզնես ամենքի առաջին կը սողայ, տաները կը լիզի։ Մի քիչ առաջ, ուր պատահէր, ինձ հայհոյում էր...

Այդ յիշողութիւնը հիւանդի դեղնած երեսը ծամածռեց դառն ծաղրի արտայայտութեամբ. այն է՝ պէտք է հայհոյանքների դուռը բաց անէր, բայց Պետրոսեանցը հանգստացրեց նորան։

—Այս երեկոյ կը բերեմ ձեզ մօտ ձեր աղջկան։

—Օհ, որքան շնորհակալ կը լինեմ ձեզնից։ Ես արժանի չեմ այդ երջանկութեան։ Հա՛, արժանի չեմ, ես անտէր անխնամ թոզեցի խեղճ երեխային։ Ես դարձայ նորա մոր—այն քնքոյշ և բարի էակի դահիճը։

Հիւանդի դէմքի վերայ երևաց տանջանքի և զղջման արտայայտութիւն։ Մի քիչ հանգստանալուց յետոյ նա ասաց.

—Ես իմ բոլոր ունեցածս կը թողնեմ աղջկանս, Գուրգէնեանի երեխաներին և թեմական դպրանոցին։

Պետրոսեանցի ուրախութեանը չափ չը կար. էլ չը համբերեց ու իսկոյն դուրս եկաւ ընկերներին աչքալուսանք տալու։

Տասը բոլէ անցած Տիգրանը արդէն Սահառունու սենեակումն էր, բայց նա տանը չէր, այն օրը Ամիրանովենց տանն էր ճաշին։

Սահառունին հէնց իւր վերադարձի առաջին օրը նկատեց, որ Ամիրանովի ու կնոջ յարաբերութիւնները շատ լարուած են։ Հետևեալ օրերը նա աւելի հաստատ համոզուեց որ իւր ենթադրութիւնը ճիշդ է, մարդ ու կին լաւ չեն իրար հետ. բացի դրանից նա տեսնում էր, որ քանի գնում է՝ Հեղինէն աւելի տաքանում է իւր վրայ, իսկ Ամիրանովը ընդհակառակը աւելի հակակրութեամբ է սկսում վերաբերուել,—և վճռեց որքան կարելի է շուտով հեռանալ Թ.-սից ու իրագործել իւր արտասահման գնալու դիտաւորութիւնը։

—Միայն Հեղինէն է ինձ կապում Թ-սի հետ. ճիշտ է, շատ զօրաւոր է այդ ձգողական ոյժը, բայց այնու ամենայնիւ ես պէտք է հեռանամ այստեղից։

Շրջապատող կեանքը օրէցօր աւելի էր զզուեցնում Սահառունուն, և քանի գնում աւելի սաստկանում էր նորա փափագը՝ դնալ արտասահման, վերադառնալ լուրջ պատրաստականութեամբ և անձնատուր լինել նոր գործունէութեան։ Նա գիտէր, որ նոր ասպարիզում շատ դժուարութիւնների կը հանդիպի, բայց իրան մէջ բաւականաչափ ոյժ և երիտասարդական եռանդ էր զգում բոլոր արգելքները յաղթելու համար։

Հեղինէի յղիութիւնը և մի քանի տնային գործեր, որ պէտք էր կարգի բերել, ստիպեցին Սահառունուն առ ժամանակ յետաձգել իւր արտասահման գնալը։

—Ով գիտի, ինչ կարող է գալ խեղճի գլխին, ինչ հիւանդութիւն կը քաշի ազատուելիս, մտածում էր Սահառունին և սիրտը դողում էր, ակամայ մտաբերելով կնոջը։

Որքան աշխատում էր հեռացնել գլխից այդ չարագուշակ միտքը՝ չէր լինում, միշտ պտտւում էր գլխում և մորմոքում սիրտը։ Այնուամենայնիւ նա խուսափում էր իւր սիրած Հեղինէից ու աշխատում էր չը պատահել նորա հետ։

—Ի՞նչ է պատահել, Դէօրգի Ալեքսանդրովիչը ոկի չի երևում, ի՞նչ է անում, հարցրեց մի օր Հեղինէն Ասունուց։

—Էհ, էլ մի ասէք, տիկին Հեղինէ, ինձ աւելի լաւ է չը խօսեցնէք, անհամբերութեամբ թափ տուեց ձեռքը Ասունին։

—Ինչքան ուզում էք բոլորդ հայհոյէք նորան, բայց ես էլի կասեմ, որ նա հիանալի մարդ է, ոգևորուած ասաց Հեղինէն և նկատեց որ Սուսնին կասկածաւոր հայեացքով նայում է իրան։

—Ճիշտ է, բայց ափսոս որ նա մի քանի դէպքերում չի ուզում հասկանալ, որ մի ծաղկով գարուն չի գալ, մի զինուոր մենակ պատերազմի դաշտ չի կարող դուրս գալ։

—Բայց, Ալեքսանդր Վասիլիչ, տաքացած ընդհատեց նորա խօսքը Հեղինէն, թէև այդ ամենքի սիրած ու տեղի անտեղի կրկնուող ֆրազան, որ մի կերպ արդարացնում է առաջաւոր մարդկանց, մասամբ ճիշդ է, սակայն պէտք է այն էլ աւելցնել, որ այդ միակ զինուորը ազդում է հազարաւոր վախկոտների վրայ և ներշնչում է նրանց այն ներքին կրակը, որով վառւում է իւր հոգին։

—Ասենք թէ ձեր ասածը ճիշտ է, տիկին Հեղինէ, բայց չէ որ մարդ պէտք է մի քիչ էլ իւր վրայ մտածի։ Մերացել է, քիչ է մնում մազերը սպիտակեն, բայց էլի չի հանգստանում, նոր-նոր ծրագիրներ է կազմում ու այդ ծրագիրները իրագործելու համար ուզում է այս քանի օրս արտասահման գնալ։ Ասել եմ ու միշտ կասեմ, ցնորամիտ էր և միշտ ցնորամիտ կը մնայ։

—Հապա ինչու մեղ չէր ասում իւր մտադրութեան մասին, հարցրեց Հեղինէն այլայլուած դէմքով և ընկաւ մտքի հետ։

Մի րոպէ անցած նա բարձրացրեց աչքերը և վստահութեամբ լի հայեացքով նայեց Սուսնուն։ Նա համակրում էր նորան իբրև Սահաուունու ամենամտերիմ բարեկամին։

—Էյ, ֆայտոն, մտքամոլոր բացականչեց Սուսնին դուրս գալով Ամիրանովենց տանից։

Երբ որ նա նստում էր կառքը, նորա կողքովն անցան Աննա Գուրգէնեանը, Պետրոսեանցը ու ինչ-որ մի պառաւ կին։

Սուսնին այնքան մոլորուած էր. մտածելով Հեղինէի դրութեան մասին, որ հազիւ պատասխանեց նրանց սիրալիր ողջոյնին ու առանց մի խօսք ասելու՝ սլացաւ կառքով։

—Այսօր Ալեքսանդր Վասիլիչը մի տեսակ էր, չէ՞ք իմանում ի՞նչ է պատահել, հարցրեց օրիորդը Պետրոսեանցին։

—Չը գիտեմ, իսա՛չը, ես ոչինչ չը նկատեցի։ Դուք այն ասէք, Աննա Արտեմիևնա, էլի վախենում էք Ուբարովից։

—Հա, վախենում եմ, բայց միևնոյն ժամանակը սաստիկ խղճում եմ նորան։ Ես երբէք չեմ մոռանայ, Տիգրան Աւետիչ, մեր առաջին տեսակցութիւնը. նա ցնորուածի նման էր նայում ինձ վրայ։ Երկրորդ անգամ այնքան տարօրինակ չը թուաց ինձ, որ մի ժամանակ սաստիկ վիրաւորել է իմ ծնողներին և ուզում է ինձնից, իբրև նրանց անդրանիկ զաւակից, ներողութիւն խնդրել այդ վիրաւորանքի համար։

Այսպէս խօսելով նրանք հասան Ուբարովի տունը և մտան հիւանդի սենեակը։

—Ա՞խ, Աստուած իմ, որքան նման է Վարիային, կարծես ինքը կենդանի կանգնած լինի այստեղ, բացականչեց Ուբարովը սրտաճմլիկ ձայնով և ձեռները մեկնեց դէպի նա։

Աննան վախիցը յետ-յետ քաշուեց։

Պետրոսեանցը շփոթուած մէկ՝ մէկին էր նայում, մէկ՝ միւսին։ Նա բոլորովին մոլորուել էր, չէր իմանում ինչ անի։

—Մտ արի ինձ, որդիս, մի վախենայ ինձանից։ Դու ամէն բան ներեցիր ինձ, չէ՞, ներեցիր։ Ուրեմն համբուրիր ինձ, որդիս, և թող այդ համբոյրը մեր բարեկամութեան գրաւական լինի։

—Ես ուրախութեամբ կը կատարեմ ձեր խնդիրքը, եթէ այդ կարող է ձեզ հանգստացնել, պատասխանեց Աննան դեռ ևս վախվրխելով։

—Ախ, որդեակս, դուրս թռաւ Ուբարովի կրծքից և նա ջղաձգաբար գրկեց Աննային։

Նա կաթուածահար եղաւ։ Բոլորը իրար գլխով դիպան։ Եփիմիան ու Թամարը մի ակնթարթում բուսան իրանց քեռու կողքին։

—Դուք էք պատճառը, դուք. մէկ էլ ոտներդ չը դնէք մեր շեմքը, բարկացած յարձակուեց Աննայի վրայ այրին և համարեա դուրս հրեց նորան սենեակից։

Խեղճ աղջիկը երկար ժամանակ չէր կարողանում ազատուել այդ անբացատրելի և սարսափելի դէպքերի ծանր տպաւորութիւնից։

—Տէր Աստուած, ի՞նչ կը նշանակի այս բոլորը։ Զէ՛, ինչ ուզում են ասեն, նա ցնորուած է։ Կամ թէ մի բան կայ այդտեղ, թէ չէ ինչու ոչէտք է Պետրոսեանցը խնդրէր, թախանձէր, որ ոչ ոքի ոչինչ չասեմ, տար ու բերում էր Աննան մտատանջելով և զանազան բացատրութիւններ տալով տարօրինակ դէպքերին։

Դրանից յետոյ Աննան էլ չը տեսնուեց Ուբարովի հետ և քիչ-քիչ դադարեց նորա վրայ մտածելուց և այդպիսով սկսեց աղատուել նորա հետ կապուած ծանր յիշողութիւնների ազդեցութիւնից։

VII

Մի տարի անցած Հեղինէն տղայ բերեց. էլ ասել չի լինի թէ որքան ուրախ էր նա։ Թոյլ, դողդոջուն ձեռներով սեղմեց նա կուրծքին իւր առջնեկին և դրօշմեց նորա երեսին իւր առաջին մայրական համբոյրը.—այդ փոքրիկ էակի վրայ էր դնում նա իւր ապագայ բախտաւորութեան յոյսը։

Ամիրանովը, որ առաջին ամբողջ շաբաթը համարեա չէր հեռանում կնոջ մօտից, պէտք է շատ կարևոր և անյետաձգելի գործով առժամանակ հեռանար Թ-սից։ Հաւատացած լինելով որ էլ վախենալու բան չը կայ, ապահովուած Հեղինէի առողջութեան վերաբերմամբ, նա գնաց թողնելով կնոջը իւր մեծ քրոջ ինամքին։ Եփեմիան հէնց Հեղինէի աղատուելու օրից նրանց տանն էր կենում և իւր անհամ գգւանքներով ու աւելորդ հոգատարութեամբ հարսի գլուխը տանում էր։ Բայց եղբօր գնալուց յետոյ նա էլ աւելորդ էր համարում այդքան եռանդ և սրտացաւութիւն ցոյց տալ գէպի ծննդկանը, և շուտ շուտ ուղարկում էր կամ Թամարին կամ մօրաքրոջը կանչելու որ իրան օգնեն։

—Ի՞նչ պտուղն ես, մի անգամ յարձակուեց նա քրոջ վրայ, սկի մի կասես թէ գնամ քրոջս մի քիչ օգնեմ։ Հոգիս դուրս եկաւ երեխային պահելով. այն էլ՝ երանի գիտենայի որ երախտիքս կը յիշեն. բայց ինչ, հէնց որ ամեն բան պրծաւ, սկի ասող չի լինելու, թէ, Եփեմիա, դու էլ կաս աշխարհիս երեսին։

—Որ այդպէս է, հապա ինչու էիր կրակ կտրել քանի որ Միքայէլը այստեղ էր, ու ոչ ոքի չէիր թողնում որ հարսին մօտենայ, չարացած փնթփնթացրեց Թամարը։

—Ի՞նչ, ի՞նչ։ Չի՞ լինի մի փայտ վերցնես ու ինձ ծեծես։ Սորան նայէք։ Լա՛ւ, կաց, ես քո օգտիցը կը գամ, որ իմանաս թէ ինչ կը նշանակի լեզուն երկու գազ երկարացնել։

—Լաւ, լաւ, էլ ինչո՞ւ ես բարկանում, վախենալով ասաց Թա-

մարը։ Դու ինձ ասացիր, որ քեռու մօտ մնամ ու սկի չը հեռանամ նորանից, ես էլ...

—Աշխարհքի բաներն այդպէս են. ուտացրու, հագցրու, գիշեր ցերեկ հանգիստ մի ունենայ, պատէպատ դիպիր մարդու տալու համար ու յետոյ էլ շնորհակալութեան տեղակ նախատինքներ լսիր։

—Հերիք է, Եփեմիա ջան, ես որ իմանայի թէ կը նեղանաս, լեզուս կը պապանձէր ու ձայն չէի հանիլ...

—Ա՛յ այդպէս... կտրեց նորա խօսքը մեծ քոյրը մի քիչ ժեղմանալով։ Դէ հիմի մանրամասն պատմիր թէ իմ բացակայութեան ժամանակ ինչ է եղել, ինչ չի եղել քեռունց տանը։

Երկուսով մօտ կէս ժամ քչփչում էին։ Եփեմիան՝ ինչպէս երևում էր՝ գոհ մնաց քրոջ պատմածից։

—Գիտես ինչ կայ, Թամար ջան։ Մի այնպէս փեսացու եմ գտել, այնպէս փեսացու, որ էլ ինչ ասեմ. ինչ որ ձեռքիս ճար կայ գործ կը դնեմ որ նորա ոտը կապեմ... ա՛յ, թէ որ քեռին քեզ բաժինք տայ, հէնց իմացիր եկեղեցում փեսայի հետ կանգնած ես։

Երկուսն էլ լռեցին։

—Գնա, մի քիչ հանգստացիր, Եփեմիա ջան, շողոքորթաբար ասաց Թամարը։ Ապահով կաց, ես ամեն բանի մոիկ կը տամ։

Մենակ որ մնաց Թամարը, ընկաւ քաղցր ցնորքների մէջ։

—Գիտեմ ում համար էր ասում քոյրս. այս քանի օրս մօրաքրոջս մօտ էր. լաւ մարդ է, սիրուն, աչքով։ Ա՛խ, մի...

Հեղինէի ձայնը ընդհատեց խեղճի քաղցր ցնորքները. նա իսկոյն վազեց հարսի սենեակը։

—Ա՛խ, Թամար ջան, դու այստեղ ես, ուրախ-ուրախ դիմեց նորան Հեղինէն ու ժեկնեց ձեռքը։ Դու կը սիրես եղբօրորդուդ, չէ՞։

—Ի հարկէ, ես որ չը սիրեմ, էլ ով պէտք է սիրի, անսովոր քնքշութեամբ արտասանեց Թամարն ու համբուրեց երեխային։

Կարծես Թամարի սառնութիւնն ու կասկածոտութիւնը վերջապէս յաղթեցին Հեղինէի մշտական զգուանքներից ու անկեղծ սրտացաւութիւնից։

Թամարը միշտ զգում էր որ Հեղինէն բարձր է բոլոր իւր շրջապատողներից և. որ Հեղինէի ներկայութեամբ ինքը կարծես փոխուում է, մի տեսակ բարոյական փոփոխութիւն է կատարուում մէջը.

միւս կողմից նա դտնուում էր Միքայէլի ու Եփեմիայի աղղեցութեան տակ. այդ պատճառով նա շատ անգամ զգում էր խառն, մասամբ և տանջող զգացմունքներ։

Մօտ մի շաբաթ էր անցել այն օրից, երբ Թամարը յանձն էր առել Հեղինէին ու երեխային պահելու բոլոր հոգսերը. վերջապէս եօթներորդ օրը Եփեմիան քրոջը կանչեց իւր մօտ և ականջին ասաց.

—Դէ, հիմի գնա քեռու մօտ։ Ինչպէս ասած, հիմի էլ հիւանդը իւր կամքը յայտնել չի կարող։ Ես ամեն հնարք գործ եմ դրել, ինչ որ պէտք է կարգադրել եմ. ոչ ոք քեռու երեսը չի տեսնի, մինչև անգամ Ելիզաւետա Բոգդանովնան. ասենք քեռին ինքն էլ ինչքան ժամանակ է չի ուզում նորան տուն թողնել։ Եան պառաւը գլխի է ընկել թէ բանն ինչումն է ու ուզում է տղային այն անիծած աղջկայ վրայ նշան դնել։

—Դիտեմ, գիտեմ, էլի ես ասել ինձ այդ բանը։

—Տես, Թամար, զգոյշ եղիր մանաւանդ գէպի Պետրոսեանցը, ասա որ բժիշկները սաստիկ արգելել են, պատուիրել են ոչ ոքի չը թողնել հիւանդի մօտ։

—Դիտեմ, գիտեմ, պատասխանեց Թամարը գլխաշորը կապելով և տխուր սրտով դուրս եկաւ հարսի տանից, ուր մի քանի օր խաղաղ ու բարոյապէս հանգիստ կեանք էր վարել, որ շատ քիչ էր պատահում։

Մի ժամ անցած, լսուեց Հեղինէի ձայնը։ Ինից զարթնել էր։

—Թամար ջան, կարծեմ երեխայի լողացնելու ժամանակն է։

—Հանգիստ կացէք, մենք այս րոպէիս կը կարգադրենք, ձայն տուեցին Եփեմիան ու մօրաքոյրը։

—Օֆ, Տէր Աստուած, էլի եկել են, զայրացած մտածեց Հեղինէն ու երեսը շուռ տուեց միւս կողմը։

Եփեմիայից ազատուելու համար նա շատ անգամ մի անմեղ խորամանկ միջոց էր գործ դնում,—աչքերը փակում էր ու քնած էր ձևանում։

Եփեմիայի ու մօրաքրոջ սիրտը նեղանում էր կիսամութ ննջարանում, ուր ծննդկանին չը զարթեցնելու համար ստիպուած էին քչփչալ. նրանք շուտ-շուտ դուրս էին գալիս գնում կողքի սենեակը և, իբր Հեղինէի հանգստութեան համար, երբեմն երեխային էլ էին հետները դուրս տանում։

—Ինչ չար երեխայ է, ինչ անում եմ չի քնում, ո՞ւմ է գցել. Միքայէլս երեխայ ժամանակ կարծես Աստծու գառը լինէր, ասում էր մօրաքոյրը երեխային բարուրելով։

—Ինչ ես հարցնում, կարծես չես իմանում. էլ ում պէտք է գցած լինի, գայլը գառ հո չի ծնի, բարկացած վրայ բերեց Եփեմիան։ Ձայնին նայի, ձայնին, ինքը մի մատնոցի չափ չը կայ—ճուռը երկինք է հասնում։ Ինչ ես մոիկ անում, կապի։

—Դայեակն ո՞ւր է։

—Ինչ անիծած կին է, տեղ ուղարկել չի լինում. այն գնալն է որ գնում է, դու հա սպասի որ պէտք է գայ։ Մի քիչ կենաս այստեղ, մօրաքոյր ջան, ես մի ժամով պէտք է մի տեղ գնամ։

Հէնց որ Եփեմիան դլխաշորը վեր առաւ որ կապի, սաստիկ դանգահարութեան ձայն լսեց։

—Հէնց իմանաս Հեղինէն է կանչում, միաբերան ասացին Եփեմիան ու մօրաքոյրը և շարած իրար երեսի նայեցին։

—Ինչ էք ուզում, հարսի ջան, քաղցրութեամբ հարցրեց Եփեմիան, մատենալով ծննդկանի մահճակալին։

—Երեխային այս սենեակից դուրս մի տանէք ու խնդրեմ ասէք դայեակին որ նա երեխայից ամենևին չը հեռանայ։

—Հոգիս, ինչու էք զուր անհանգստանում, հազիւ հաղ եմ մի եղբորորդի ունեցել, որ դայեակի ումիկին թողնեմ. ստար կնկայ սիրտը ինչ կը ցաւի երեխայի վերայ. հաղար ու մի փորձանք կայ. նա հո ուրիշի երեխայի համար իւր քնից չի զրկւի. բան է մէկ էլ տեսար ննջաց ու իմ սիրուն հրեշտակին գրկիցը վայր գցեց. այն ժամանակ եղբորս ինչ պատասխան տամ, գլուխս որ քարովը խփեմ։

—Թէ Աստուած կը սիրէք, գնացէք ձեր տունը, հանգստացէք, նեղութիւն մի կրէք, ես համարիա առողջ եմ այժմ։

—Ինչ էք ասում, Հեղինէ ջան, միթէ ես կարող եմ ձեզ այդ գրութեան մէջ մենակ թողնել։

Հեղինէն էլ բան չասաց, լսեց ու երեսը շուռ տուեց միւս կողմը։

Միւս օրը ճաշից յետոյ Հեղինէն ննջից վեր թռաւ ինչ-որ մի թրըխկոցից. կարծես մի բան վայր ընկաւ. խեղճ մօր սրտի նախազգացումը սուտ դուրս չեկաւ, երեխան վայր էր ընկել դայեակի գրկից։ Հեղինէն, կարծելով թէ երեխան մեռաւ, լեղապատառ ձչաց

և ցնորուածի պէս դուրս թռաւ անկողնից ու բարձրացրեց գրկեց երեխային. բայց չը կարողացաւ այդ անգին բեռը մահճակալին հասցնել, սաստիկ երկիւղից ուժասպառ լինելով՝ կիսաճանապարհին վայր ընկաւ գետին՝ պինդ սեղմած գրկումը իւր սիրելի երեխային։ Այդ բոլորը այնպէս արագ կատարուեց, որ դայեակը, քնից վեր թռչելով, չէր կարողանում գլուխ հանել թէ բանն ինչումն է ու մի քիչ շաբաթ կանգնելուց յետոյ՝ գնաց Եփեմիային կանչելու։

Նոյն գիշերը Հեղինէն սկսեց սաստիկ տենդել.

Բոլորը իրար գլխով գիպան։ Եփեմիան վախենալով պատասխանատուութիւնից, որովհետև իւր անուշադրութեան շնորհիւ էր պատահել անբաղդութիւնը, միայն այն էր մտածում թէ ինչպէս արդարացնի իրան եղբոր առաջ։ Ասունին ամբողջ օրը ոտի վրայ էր. անդադար վազում էր բժիշկների մօտ ու դեղատուն։

—Օ՛ֆ, Տէր Աստուած, սատանայական բան է էլի՛, ինչու պէտք է հէնց այդ ժամանակ ես տանը չը լինէի. դոնէ Միքայէլը այստեղ լինէր, շարած ատում էր Թամարը, որ իրան բոլորովին կորցրել էր վախից ու վրդովմունքից։

—Ճիշտ է, պէտք է կանչել Միքայէլին։ Նա ինձ խնդրեց որ եթէ մի բան պատահի, իրան իմաց տամ, նկատեց Ասունին։

—Մի քիչ համբերէք, տեսնենք ինչ կը լինի. Միքայէլը սաստիկ կը վախենայ որ կանչէք. ով է իմանում՝ ինչ կարծի. կարելի է շուտով լաւանալու է, ինչու էք ուզում զուր տեղը խեղճին լեղապատառ անել, աշխատում էր համոզել Ասունուն Եփեմիան։

—Չի կարելի էլ սպասել. դուք հօ գիտէք որ բժիշկները վախենում են որ կենդանի չը մնայ, պատասխանեց Ասունին սաստիկ վրդովուած ու վճռեց գնալ Սահառունուց խորհուրդ հարցնել։

Նա հաստատացած էր որ Սահառունու սիրտը ցաւում էր Հեղինէի համար։

Սահառունին, որ միշտ Ասունուցն էր տեղեկանում Հեղինէի առողջութեան մասին, սաստիկ վախեցաւ, տեսնելով նորա յոգնած ու տխուր դէմքը։

—Ի՞նչ կայ, Ալեքսանդր, հօ բան չի պատահել։

—Ախ, Գէորգ, դոնէ դու օգնիր ինձ, ի սէր Աստուծոյ, ինձ բոլորովին կորցրել եմ, ոչինչ չեմ կարողանում վճռել։ Տիկին Հեղինէն

մերձիմահ հիւանդ է. մարդը այստեղ չէ. գնալիս կնոջը ինձ յանձնեց. հիմի չեմ իմանում ինչ անեմ: կանչե՞մ գործը թողնի գայ թէ չէ, ինչ խորհուրդ կը տաս։

Բայց Սահառունին պատասխանի վրայ չէր մտածում։ Ասունու հաղորդած լուրը կայծակահար արեց նորան. արիւնը երակներումը սառեց. կանգնած տեղումը քարացաւ մեաց՝ սպրտնած երեսով, ջղաձգաբար կծկուած բռունցքներով և շաղուած հայեացքով։

Այդ վայրկեանը բաւական էր Ասունու աչքերը բանալու համար. նա հասկացաւ թէ որքան թանկ է իւր բարեկամի համար Հեղինէի կեանքը։

Ակամայ ականատես դառնալով Սահառունու տանջանքներին, նա սաստիկ զղջաց իւր անզգոյշ վարմունքի համար։

Մինչդեռ Ասունին շտապած մտածում էր թէ ինչպէս անի որ մի կերպ մխիթարի ընկերը և փարատի նորա վիշտը, Սահառունու անմիտ հայեացքը թափառում էր տարածութեան մէջ և նորա դէմքը աւելի ու աւելի սաստիկ էր ծածկւում մեռելային դեղնութեամբ։

—Գէորգ, հանգստացիր, գուցէ դեռ յոյս կայ, մի ժամից յետոյ կօնսիլիում կը լինի, բժիշկները կը խորհրդակցեն՝ տեսնենք ինչ կը վճռեն. գնանք Ամիրանովենց տունը, ասաց Ասունին մտերմաբար և սրտացաւութեամբ, բռնելով ձեռքը։

Սահառունին կարծես ուշքի եկաւ։

—Դու ինչ-որ ասացիր... յանկարծ խօսեց նա։ Ասում ես... յոյս կայ։ Այո, մենք պէտք է ամեն հնարք գործ դնենք նորան փրկելու համար։

Այդ ասելով Սահառունին սաստիկ շտապելով վերցրեց գլխարկը և, չը նայելով որ յանկարծական ջղային ցնցումից բոլորովին ուժասպառ՝ էր եղել, գլխապատառ դուրս թռաւ փողոցը։

—Հ՞ը, աղջիկ-պարոնը ի՞նչպէս է, հարցրեց Ասունին սրահում դայեակին։

Սահառունին աչքերը քցած պառաւի դողդոջուն շրթունքներին անհամբեր սպասում էր պատասխանի։

—Ինչպէս առաջ էր. ուշքի չի եկել ու զառանցում է, պատասխանեց պառաւը լացակրկնած աչքերով։ Ախ, ինչ ասեմ, սիրտս

այրում փոթորիում է, որ Նորան այդպէս տեսնում եմ. այս չորացած ձեռներիս վրայ եմ մեծացրել իմ հրեշտակիս։ Ես էի ուզում պահել երեխային, բայց հօ գիտէք Նորա բարութիւնը, ասում է, «չէ, Նանի, մեղք ես, դու ինչ հալ ունես որ ամբողջ գիշերները անքուն նստես», ու ուրիշ չահել կնիկարմատ բռնեց։ Ախ, աչքերս դուրս գար, ու չը թողնէի որ ուրիշ բռնի, ասում էր հաւատարիմ վրացի դայեակը ու հուքուր հուքուր լալիս, աղի արտասունք թափում։

Նա չահել ժամանակ աղախին էր մտել Շակունիների մօտ և այնքան սիրում էր Հեղինէին, որ Նորա պսակելուց յետոյ աղաչել, թոյլտուութիւն էր ստացել Նորա տանը ապրելու ու վճռել էր ամենևին չը հեռանալ Նորանից։

—Հանգստացիր, Նանի, աղջիկ պարոնդ կը լաւանայ, մխիթարում էր խեղճ պառաւին Աստուծին, ու դառնալով դէպի Սահառունին աւելցրեց, դու, Գէորգ, նստիր առանձնասենեակում, իսկ ես գնամ բժիշկներին կանչելու։

—Լաւ։ Շուտ գնա ի սէր Աստուծոյ։

Սահառունու դէմքը արտայայտում էր յուսահատութիւն, սէր և յոյս, որոնք փոխէփոխ ալէկոծում ու լուսաւորում էին Նորա սիրտը։

—Ձեր օգնութեան կարօտութիւն չը կայ, նեղութիւն մի կրէք, խնդրեմ, շոր-շոր նկատեց Եփեմիան պատահելով Սահառունուն առանձնասենեակի շէմքում։

—Միթէ՞ ծննդկանի հանգստութիւնը և մահամերձ հիւանդի հոգատարութիւնը այս վհուկին է յանձնուած, մտածեց Սահառունին։

Այդ րոպէին Նորա սիրտն այնքան լիքն էր զանազան յուզմունքներով, որ զարոյթը տեղ չէր կարող գտնել իւր համար, և նա մի րոպէ անցած մեղմ կերպով ասաց։

—Թոյլ տուէք ինձ, Եփեմիա Պետրոշնա, այստեղ նստեմ մինչև որ Ալեքսանդրը վերադառնայ, գուցէ մի բան պէտք լինի՝ անեմ։

—Դուք գիտէք, նստէք սպասէք, կէս ժամ կը լինի որ նա քնել է։

Ինչ մտքեր չանցան Սահառունու գլխովը, ինչ չը զգաց նա առանձնասենեակում նստած ժամանակը։ Մի պատ էր միայն բաժանում Նորան իւր սիրած էակից. հոգին ալանում էր գէպի հիւանդը, նա երեսը կայցրեց սառը պատին ու ընկաւ մտքի հետ...

Դուռը կամաց թխթխկացրին. նա ուշքի եկաւ։

– Դէորգ, արի դահլիճը, բժիշկները ժողովւել են, պէտք է խորհրդակցեն։

Սառահունին վեր թռաւ տեղից ու գնաց դահլիճը։

Իւր կեանքումը Սահառունին ոչ մի խօսակցութեան այնպիսի ուշադրութեամբ ականջ չէր դրել ինչպէս այժմ ականջ էր դնում բժիշկների խօսակցութեանը. կարծես իւր կեանքը կախւած լինէր նրանց «այո» կամ «ոչ»-ից։ Դատարանում կեանքի կամ մահւան դատավճիռ սպասող մեղադրեալի ղգացմունքով դիտում էր նա բժիշկների դէմքերը, աշխատելով նշմարել նրանց արտայայտութեան մէջ գոնէ մի թոյլ նշան, յոյս կայ փրկւելու։

Վերջապէս բժիշկները յայտնեցին որ դեռ չը պէտք է սպասել ճգնաժամին։ Սահառունին մի քիչ հանդստացաւ այդ պատասխանից ու գնաց տուն, բայց տանը չը կարողացաւ նստել, կէս ժամ չանցած նորից դուրս եկաւ ու երկար ժամանակ աննպատակ թափառում էր փողոցներում։ Մութը որ ընկաւ նա նորից գնաց դէպի Ամիրանովենց տունը և համարեա գիշերւայ կէսը անցկացրեց լուսամուտների տակ կարծես ուզում էր տան մէջ կատարւող շարժմունքից գուշակել թէ ինչպէս է Հեղինէի առողջութիւնը։

(Կը շարունակւի)